Audit ARMENIA

# «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ»

# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Audit ARMENIA

# Բովանդակություն


3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Ներկայացվում է «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» Փակ Բաժնետիրական Ընկերության Ղեկավարությանը**

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ):

**Կարծիքի հիմք**

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Այլ հանգամանք**

Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. մարտի 26-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

**Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
03 ապրիլի, 2026թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

«ՍՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

| Հազար դրամ | Ծանոթ. | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 4,299,106 | 4,630,592 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 70,545 | 80,902 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 10 | 14,894 | 13,228 |
| | | 4,384,545 | 4,724,722 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| *Պաշարներ* | 6 | 85,884 | 85,570 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | 4,196,124 | 3,188,032 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 1,953,808 | 1,541,302 |
| Ավանդ ՀՀ ռեզիդենտ բանկերում | 9 | 1,968,105 | - |
| | | 8,203,921 | 4,814,904 |
| Ընդամենը ակտիվներ | | 12,588,466 | 9,539,626 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | | | |
| Կանոնադրական կապիտալ | 11 | 2,554,140 | 2,601,880 |
| Պահուստային կապիտալ | 11 | 399,000 | 399,000 |
| Կուտակված շահույթ | 11 | 8,111,640 | 5,277,719 |
| | | 11,064,780 | 8,278,599 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Փոխառություններ | | - | - |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 10 | 216,740 | 224,622 |
| | | 216,740 | 224,622 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 654,613 | 734,806 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 652,333 | 301,599 |
| | | 1,306,946 | 1,036,405 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 12,588,466 | 9,539,626 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 03-ին՝

Գլխավոր տնօրենի ժ/պ
Վարդան Չիլինգարյան

Գլխավոր հաշվապահ
Էլիզա Գասպարյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

| Հազար դրամ | Ծանոթ. | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա |
|---|---|---|---|
| Իրացումից հասույթ | 13 | 10,885,482 | 7,597,234 |
| Վաճառքի ինքնարժեք | 14 | (6,045,134) | (4,974,416) |
| Համախառն շահույթ | | 4,840,348 | 2,622,818 |
| Այլ եկամուտ | 15 | 238,559 | 54,735 |
| Վարչական ծախսեր | 16 | (560,926) | (497,495) |
| Այլ ծախսեր | 17 | (417,575) | (569,312) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | 4,100,406 | 1,610,746 |
| Ֆինանսական եկամուտ | 18 | 178,008 | 170,122 |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 19 | 259,455 | (277,676) |
| Շահույթ/վնաս մինչև հարկերը | | 4,537,869 | 1,503,192 |
| Շահութահարկի գծով ծախս | 20 | (850,592) | (419,067) |
| Տարվա շահույթ | | 3,687,277 | 1,084,125 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո | | - | - |
| Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 3,687,277 | 1,084,125 |

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը։

| Հազար դրամ | Կանոնադրական կապիտալ | Պահուստային կապիտալ | Կուտակված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 2024թ հունվարի 1-ի դրությամբ | 2,601,880 | 399,000 | 4,991,249 | 7,992,129 |
| Տարվա շահույթ | - | - | 1,084,125 | 1,084,125 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 1,084,125 | 1,084,125 |
| Շահաբաժիններ | - | - | (797,655) | (797,655) |
| 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,601,880 | 399,000 | 5,277,719 | 8,278,599 |
| Գործարքներ սեփականատերերի հետ | (47,740) | - | (104,160) | (151,900) |
| Տարվա շահույթ | - | - | 3,687,277 | 3,687,277 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 3,687,277 | 3,687,277 |
| Շահաբաժիններ | - | - | (749,196) | (749,196) |
| 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,554,140 | 399,000 | 8,111,640 | 11,064,780 |

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը։

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Ծառայությունների մատուցումից դրամական միջոցների մուտքեր | 10,481,178 | 7,202,524 |
| Նյութերի, ապրանքների ձեռքբերում | (38,080) | (46,727) |
| Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում | (705,276) | (582,800) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (4,226,318) | (3,652,283) |
| Շահութահարկի վճարում | (469,557) | (352,631) |
| Վճարումներ բյուջե | (1,156,951) | (1,048,196) |
| Վճարումներ պարտադիր սոցիալական վճարների գծով | (134,078) | (114,631) |
| Այլ մուտքեր | 32,851 | 12,659 |
| Այլ ելքեր | (100,210) | (103,998) |
| Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ | 3,683,559 | 1,313,917 |
| *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (343,001) | (885,400) |
| Ստացված տոկոսային եկամուտ | 9,469 | 176,815 |
| Ավանդի ներդրում | (1,800,000) | - |
| Ավանդի գումարի վերադարձ | - | 1,700,000 |
| Փոխառության տրամադրում | (160,000) | - |
| Տրված փոխառության վերադարձ | 160,000 | - |
| *Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | (2,133,532) | 991,415 |
| *Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Փոխառություններից մուտքեր | - | - |
| Վճարված շահաբաժիններ | (749,196) | (797,655) |
| *Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (749,196) | (797,655) |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ | 800,831 | 1,507,677 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | 207,261 | (214,855) |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 3,188,032 | 1,895,210 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում | 4,196,124 | 3,188,032 |

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաէրոնավիգացիա» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ «Ընկերություն») գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 1997թ. օգոստոսի 7-ին: Ընկերության գրանցման համարն է 290.110.1329584:

Ընկերությունը վերակազմակերպվել է ՀՀ կառավարության 1999թ. օգաստոսի 3-ի թիվ 491 որոշմամբ և ՀՀ Տրանսպորտի նախարարության 1999 թվականի օգաստոսի 9-ի թիվ 158 հրամանի համաձայն: Այն հանդիսանում է «Հայաէրոնավիգացիա» պետական փակ բաժնետիրական Ընկերության (գրանցման համար 271.070.01467, վկայական 01Ա036186) իրավահաջորդը:
ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 16-ի թիվ 828 որոշման համաձայն Ընկերության բաժնետոմսերի տնօրինման իրավունքը վերապահված է եղել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչությանը, որը ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 11-ի թիվ 733 որոշմամբ վերակազմավորվել է ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության քաղաքացիական ավիացիայի վարչությունից՝ դառնալով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչություն՝ գերատեսչական կարգավիճակով:

ՀՀ կառավարության 2024թ. հուլիսի 4-ի «ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 16-ի թիվ 828 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1050-Ա որոշման համաձայն Ընկերության բաժնետոմսերի տնօրինման իրավունքը վերապահվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

2003թ-ից Ընկերությանն են փոխանցվել նաև ազգային մյուս քաղաքացիական օդանավակայանների համապատասխան ծառայությունները: Իր հիմնադրման օրից Ընկերությունը նպատակային և հետևողական քայլեր է կատարում Քաղաքացիական Ավիացիայի Միջազգային Կազմակերպության (ԻԿԱՕ) և Եվրոպական Աէրոնավիգացիայի Անվտանգության Գործակալության (ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ) պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու և միջազգային սահմանված չափորոշիչներին ու առաջարկվող գործելաձևերին համապատասխանելու ուղղությամբ:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական օրենսգրքին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեություն (այդ թվում՝ ՀՀ օդային տարածքի օգտագործման և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ՀՀ-ում գործող պահանջներին համաձայն ավիացիայի բնագավառում կիրառվող տեխնիկական սարքավորումների զարգացման ապահովման) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

Խորհրդի անդամներ

| | |
|---|---|
| Արամ Խաչարյան՝ | Խորհրդի նախագահ, |
| Վարդան Չիլինգարյան՝ | Խորհրդի գործադիր անդամ, |
| Արմեն Մանուկյան՝ | Խորհրդի ոչ գործադիր անդամ, |
| Արմեն Մելիք-Իսրայելյան՝ | Խորհրդի ոչ գործադիր անդամ, |
| Կարեն Վերմիշյան՝ | Խորհրդի ոչ գործադիր անդամ, |
| Կամո Մարտիրոսյան՝ | Խորհրդի անկախ անդամ, |
| Անաստաս Աղազարյան՝ | Խորհրդի անկախ անդամ: |

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- ՀՀ օդային տարածքում օդային երթևեկության կազմակերպում և ապահովում,
- ՀՀ օդային տարածքում իրականացվող չվերթերի աերոնավիագացիոն տեղեկատվության ապահովում,
- թռիչքների ռադիոտեխնիկական ապահովում և կապի սարքավորումների տեխնիկական ներդրում, սպասարկում և այլն,
- իր պատասխանատվության տակ գտնվող օդային տարածքում թռիչքների կառավարում,
- սահմանված կարգով թռիչքների կազմակերպման ապահովում:

2025թ. Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 300 մարդ (2024թ.՝ 280 մարդ):

Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Ք. Երևան, Իսահակ Գասպարյան փողոց 33:

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները առաջին անգամ պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

### 2.5 Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են հաշվետու ժամանակաշրջանում և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

*Հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել են հետևյալ նոր և վերանայված ստանդարտները և փոփոխությունները.*

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (փոփոխություններ)

Փոփոխությունները վերաբերում են պարտավորությունների դասակարգմանը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ: Պարտավորությունների դասակարգումը կախված է հաշվետու օրվա դրությամբ առկա իրավունքներից: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ուղեցույց 2 (փոփոխություններ)

Բացահայտումների պահանջների պարզեցում՝ հաշվապահական քաղաքականությունների վերաբերյալ: Ընկերությունը ներկայացնում է էական քաղաքականությունները: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 8 «Հաշվապահական քաղաքականություններ, գնահատումներ և սխալներ» (փոփոխություններ)

Ներմուծվել է «հաշվապահական գնահատումների» հստակ սահմանում: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՄՍ 12 «Շահութահարկ» (փոփոխություններ)

Կապված են հետաձգված հարկի ճանաչման հետ որոշ գործարքների դեպքում: Էական ազդեցություն չի ունեցել:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» (փոփոխություններ)

Վարձակալության պարտավորությունների հետ կապված փոփոխություններ: Ընկերության վրա էական ազդեցություն չի ունեցել:

ՖՀՄՍ 7 և ՖՀՄՍ 9 (փոփոխություններ)

Ֆինանսական գործիքների բացահայտումների և դասակարգման որոշ ճշգրտումներ: Էական ազդեցություն չի ունեցել:

Ընկերությունը գնահատել է նաև դեռևս չկիրառված ստանդարտների ազդեցությունը և եկել է եզրակացության, որ դրանց կիրառումը չի հանգեցնի էական փոփոխությունների ֆինանսական հաշվետվություններում:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

| | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ռուբլի | 4.87 | 3.71 |
| ԱՄՆ դոլար | 381.36 | 396.56 |
| Բեռ Բրիտանական ֆունտ | 514.86 | 499.27 |
| Եվրո | 449.01 | 413.89 |

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | | |
|---|---|---|
| Շենքեր և շինություններ | - | 40-67 տարի |
| Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ | - | 20-35 տարի |
| Մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ | - | 10-24 տարի |
| Արտադրական, տնտեսական գույք և այլ | - | 5-35 տարի: |

### 3.3 Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ

համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

### 3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.5 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

### 3.6 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորմանը կամ էլ այնպիսի հոդվածի, որը ճանաչված է ուղղակիորեն սեփական կապիտալում:

### 3.7 Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ

Ընկերության հասույթը հիմնականում ձևավորվում է օդային նավիգացիոն ծառայություններից, որոնք մատուցվում են օդային տարածքով անցնող տեղական և միջազգային թռիչքներին:

Հասույթի ճանաչումը իրականացվում է ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի համաձայն՝ հինգ քայլից բաղկացած մոդելի հիման վրա:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. ճանաչել հաճախորդի հետ կնքված պայմանագիրը.

Քայլ 2. ճանաչել պայմանագրային պարտավորությունները.

Քայլ 3. սահմանել գործարքի գինը.

Քայլ 4. կիրառել գործարքի գինը պայմանագրային պարտավորությունների նկատմամբ.

Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ Ընկերությունը ավարտում է պայմանագրային պարտավորությունները:

Ընկերությունը ճանաչում է հասույթը այն պահին, երբ կատարում է իր կատարողական պարտավորությունը՝ ապահովելով օդային նավիգացիոն ծառայություն, այսինքն՝ երբ թռիչքը իրականացվում է Ընկերության վերահսկողության տակ գտնվող օդային տարածքում:

Հասույթի չափը որոշվում է հաստատված սակագների հիման վրա, որոնք կիրառվում են թռիչքի պարամետրերի նկատմամբ (օրինակ՝ օդանավի քաշ, անցած տարածություն և այլ գործոններ):

Միջազգային թռիչքների մասով հասույթի հաշվարկը կատարվում է երրորդ կողմի՝ համապատասխան միջազգային կազմակերպության (օրինակ՝ Եվրոկոնտրոլ) կողմից տրամադրված տվյալների հիման վրա, որոնք համադրվում են Ընկերության ներքին տվյալների հետ:

Հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանում, որում իրականացվել է համապատասխան թռիչքը:

### 3.8 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

### 3.9 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում*

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝

սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

*III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

*IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում*

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են դրամային և արտարժութային բանկային հաշիվների մնացորդները:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված

դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

*I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 4 Հիմնական միջոցներ

| հազար դրամ | Հողամասեր | Շենքեր և շինություններ | Կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ | Մեքենաներ և սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ | Օգտագործման համար ոչ մատչելի ՀՄ | Այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սկզբնական արժեք | | | | | | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 461,218 | 1,236,347 | 236,710 | 8,396,606 | 145,049 | 118,199 | 69,400 | 11,372 | 10,674,901 |
| Ավելացում, կապիտալացում | - | - | - | 25,349 | - | - | 956,676 | - | 982,025 |
| Օտարում | - | - | - | (318,323) | - | (631) | - | (1,111) | (320,065) |
| Վերադասակարգում | - | - | - | 95,887 | 12,315 | 2,624 | -111,213 | 387 | - |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 461,218 | 1,236,347 | 236,710 | 8,199,519 | 157,364 | 120,192 | 914,863 | 10,648 | 11,336,861 |
| Ավելացում, կապիտալացում | - | - | 1660 | 6,726 | - | - | 186,961 | - | 195,347 |
| Օտարում, դուրսգրում | (3,454) | (74,087) | - | (6,852) | - | (506) | - | (17) | (84,916) |
| Վերադասակարգում | - | - | - | 250,447 | - | 7,392 | (258,009) | 170 | - |
| 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 457,764 | 1,162,260 | 238,370 | 8,449,840 | 157,364 | 127,078 | 843,815 | 10,801 | 11,447,292 |
| Կուտակված մաշվածություն | | | | | | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | - | 421,427 | 140,096 | 5,818,107 | 67,604 | 68,727 | - | 9,888 | 6,525,849 |
| Տարվա ծախս | - | 36,430 | 11,029 | 432,549 | 12,280 | 7,796 | - | 311 | 500,395 |
| Օտարում | - | - | - | (318,231) | - | (631) | - | (1,111) | (319,973) |
| Վերադասակարգում | - | - | - | - | - | - | - | - | - |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | - | 457,857 | 151,125 | 5,932,425 | 79,884 | 75,892 | - | 9,088 | 6,706,271 |
| Տարվա ծախս | - | 35,704 | 11,367 | 421,282 | 12,988 | 8,094 | - | 312 | 489,747 |
| Օտարում | - | (40,457) | - | (6,852) | - | (506) | - | (17) | (47,832) |
| Վերադասակարգում | - | - | - | - | - | - | - | - | - |
| 2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ | - | 453,104 | 162,492 | 6,346,855 | 92,872 | 83,480 | - | 9,383 | 7,148,186 |
| Հաշվեկշռային արժեք | | | | | | | | | |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 461,218 | 778,490 | 85,585 | 2,267,094 | 77,480 | 44,300 | 914,863 | 1,560 | 4,630,590 |
| 2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ | 457,764 | 709,156 | 75,878 | 2,102,985 | 64,492 | 43,598 | 843,815 | 1,418 | 4,299,106 |

## 5 Ոչ նյութական ակտիվներ

| հազար դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ և ապրանքանիշեր | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Սկզբնական արժեք | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 37,010 | 21,824 | 280,404 | 339,238 |
| Ավելացում, կապիտալացում | - | 23,408 | 8,000 | 31,408 |
| Օտարում | - | - | - | - |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 37,010 | 45,232 | 288,404 | 370,646 |
| Ավելացում, կապիտալացում | 18,518 | 1,969 | - | 20,487 |
| Օտարում, դուրսգրում- | | (3,700) | - | (3,700) |
| 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 55,528 | 43,501 | 288,404 | 387,433 |
| Կուտակված մաշվածություն | | | | |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ | 33,215 | 7,944 | 219,423 | 260,582 |
| Տարվա ծախս | 1,551 | 2,722 | 24,888 | 29,161 |
| Օտարում, դուրսգրում | - | - | - | - |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 34,766 | 10,666 | 244,311 | 289,743 |
| Տարվա ծախս | 1,584 | 4,533 | 24,728 | 30,845 |
| Օտարում, դուրսգրում | - | (3,700) | - | (3,700) |
| 2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ | 36,350 | 11,499 | 269,039 | 316,888 |
| Հաշվեկշռային արժեք | | | | |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,244 | 34,566 | 44,093 | 80,903 |
| 2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ | 19,178 | 32,002 | 19,365 | 70,545 |

## 6 Պաշարներ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Հումք, նյութեր | 54,720 | 55,019 |
| Վառելիք | 9,687 | 9,795 |
| Պահեստամասեր | 665 | 195 |
| Այլ նյութեր | 20,812 | 20,561 |
| | 85,884 | 85,570 |

## 7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Դրամարկղ | - | - |
| Բանկային հաշիվներ (դրամային) | 225,595 | 795,214 |
| Բանկային հաշիվներ (արտարժութային) | 3,970,529 | 2,392,818 |
| | 4,196,124 | 3,188,032 |

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,941,696 | 1,495,197 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 2,364 | 2,364 |
| | 1,944,060 | 1,497,561 |
| Տրված կանխավճարներ | 302 | 5,051 |
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 9,446 | 38,690 |
| | 9,748 | 43,741 |
| | 1,953,808 | 1,541,302 |

Դեբիտորական պարտքերի ժամկետային վերլուծությունը բացահայտված է ստորև.

| Հազար դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Մինչև 6 ամիս | 70,249 | 78,825 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 1,873,811 | 1,418,736 |
| | 1,944,060 | 1,497,561 |

## 9 Ավանդային միջոցներ

Ընկերությունը ՀՀ ռեզիդենտ բանկերում ունի 1,968,105 հազ. դրամի ավանդներ:
ՀՀ ռեզիդենտ բանկ 1

| Ավանդային պայմանագրի համարը | Ավանդի արժույթը | Ավանդի տարեկան տոկոսադրույք | Ավանդի մնացորդը | Ավանդի մարման ամսաթիվ | 01.01.2025-31.12.2025թթ. հաշվեգրված տոկոսների գումարը |
|---|---|---|---|---|---|
| 8719078006 | AMD | 9.5 | 800,000,000 | 02.02.2026թ. | 69,961,643.80 |

ՀՀ ռեզիդենտ բանկ 2

| Ավանդային պայմանագրի համարը | Ավանդի արժույթը | Ավանդի տարեկան տոկոսադրույք | Ավանդի մնացորդը | Ավանդի մարման ամսաթիվ | 31.12.2025թ. հաշվեգրված տոկոսների գումարը |
|---|---|---|---|---|---|
| 07TD007-25 | AMD | 10.00 | 500,000,000 | 16.01.2026թ. | 47,945,205.50 |

ՀՀ ռեզիդենտ բանկ 3

| Ավանդային պայմանագրի համարը | Ավանդի արժույթը | Ավանդի տարեկան տոկոսադրույք | Մնացորդը առ 31.12.2025թ. | Մարման ամսաթիվ | 31.12.2025թ. հաշվեգրված տոկոսների գումարը |
|---|---|---|---|---|---|
| 2621572939412001 | AMD | 10.5 | 500,000,000 | 19.01.2026թ. | 50,198,630.14 |

## 10 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | (211,394) | (232,237) |
| Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս | 9,547 | 20,843 |
| Տարեվերջի մնացորդ | (201,847) | (211,394) |

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 1 հունվարի 2025թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | 31 դեկտեմբերի 2025թ. |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արձակուրդի պահուստ | 13,228 | 1,666 | 14,894 |
| | 13,228 | 1,666 | 14,894 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | |
| Հիմնական միջոցներ | (224,622) | 7,881 | (216,741) |
| | (224,622) | 7,881 | (216,741) |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ) | (211,394) | 9,547 | (201,847) |

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 1 հունվարի 2024թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Արձակուրդի պահուստ | 8,819 | 4,409 | 13,228 |
| | 8,819 | 4,409 | 13,228 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | |
| Հիմնական միջոցներ | (241,056) | 16,434 | (224,622) |
| | (241,056) | 16,434 | (224,622) |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ) | (232,237) | 20,843 | (211,394) |

## 11 Սեփական կապիտալ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 2,554,140 | 2,601,880 |
| | 2,554,140 | 2,601,880 |

Կանոնադրական կապիտալը կազմում է 2,554,140 հազ. դրամ, որը բաղկացած է 10,000 դրամ անվանական արժեքով 255,414 բաժնեմասից: Այն վճարված է և տեղաբաշխված:

2025թ. ընթացքում Ընկերությունը հայտարարել և վճարել է 749,196 հազար դրամ շահաբաժին (2024թ. Ընկերությունը հայտարարել և վճարել է 797,655 հազար դրամ շահաբաժին):

Մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվել են հատկացումներ, ինչը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստային կապիտալը կազմել է՝ 399,000 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 399,000 հազար դրամ):

## 12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 89,847 | 208,448 |
| Ստացված կանխավճարներ | 157,331 | 194,312 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով | 182,552 | 153,847 |
| Աշխատավարձի գծով պարտք | 142,137 | 104,710 |
| Արձակուրդի պահուստ | 82,746 | 73,489 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | - | - |
| | 654,613 | 734,806 |

## 13 Հասույթ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Մայրուղային չվերթներ | 7,219,730 | 4,194,562 |
| Օդանավակայանային | 3,665,503 | 3,402,414 |
| Այլ | 249 | 258 |
| | 10,885,482 | 7,597,234 |

## 14 Վաճառքի ինքնարժեք

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 5,125,129 | 4,052,182 |
| Նյութեր | 24,143 | 32,135 |
| Վառելիք | 8,184 | 7,188 |
| Կոմունալ ծախսեր | 52,431 | 58,504 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 515,414 | 524,508 |
| Կադրերի պատրաստում, վերապատրաստում | 93,186 | 89,292 |
| Գործուղման ծախսեր | 67,044 | 67,380 |
| Թռիչքների ստուգում | 73,571 | 68,900 |
| Այլ | 86,032 | 74,327 |
| | 6,045,134 | 4,974,416 |

## 15 Այլ եկամուտներ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Վարձակալությունից եկամուտ | 1,650 | 1,200 |
| Եկամուտներ տույժերից, տուգանքներից | 68,350 | 46,202 |
| Անհուսալի կրեդիտորական պարտքի դուսգրումից եկամուտ | 12,932 | - |
| Հիմնական միջոցների օտարումից եկամուտ | 151,900 | - |
| Նյութական վնասի փոխհատուցումներից եկամուտներ | 761 | 740 |
| Այլ եկամուտ | 2,966 | 6,593 |
| | 238,559 | 54,735 |

## 16 Վարչական ծախսեր

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատանքի վարձատրության ծախսեր | 434,308 | 365,066 |
| Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր | 5,178 | 5,049 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 8,566 | 7,507 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 27,945 | 18,419 |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 512 | 377 |
| Բանկային և Ապահովագրական ծախսեր | 40,777 | 48,091 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 16,114 | 15,518 |
| Այլ ծախսեր | 27,526 | 37,468 |
| | 560,926 | 497,495 |

## 17 Այլ ծախսեր

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Eurocantrol անդամավճար | 204,743 | 177,110 |
| Արհմիություն հատկացումների հաշվին օգնություն | - | 309,992 |
| ՀՄ-ի օտարումից ծախսեր | 37,083 | |
| Այլ ծախսեր | 175,749 | 82,210 |
| | 417,575 | 569,312 |

## 18 Ֆինանսական եկամուտ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Տոկոսի կապիտալացումից եկամուտ | 9,903 | 20,822 |
| Ավանդի տոկոսներից եկամուտ | 168,105 | 149,300 |
| Վարկերի չկրած տոկոսային ծախսեր | - | - |
| Ֆինանսական վարձակալության տոկոսային ծախսեր | - | - |
| | 178,008 | 170,122 |

## 19 Այլ ֆինանսական հոդվածներ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը* | | |
| Տրամադրված փոխառություններ | | |
| Դեբիտորական պարտքեր | 91,650 | (86,874) |
| Դրամական միջոցներ | 207,261 | (214,855) |
| Կրեդիտորական պարտքեր | (39,456) | 24,053 |
| | 259,455 | (277,676) |

## 20 Շահութահարկի գծով ծախս

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 860,140 | 439,910 |
| Հետաձգված հարկ | (9,548) | (20,843) |
| | 850,592 | 419,067 |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների) | 4,538,303 | | 1,503,192 | |
| Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%) | 816,894 | 18.00 | 270,575 | 18.00 |
| (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ | 33,698 | 0.74 | 148,492 | 9.9 |
| Շահութահարկի գծով ծախս | 850,592 | 18.74 | 419,067 | 27.9 |

## 21 Ֆինանսական գործիքներ

### 21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

### 21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,941,696 | 1,495,197 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4,196,124 | 3,188,032 |
| Տրված փոխառություններ | - | - |
| | 6,137,820 | 4,683,229 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ | | |
| Ստացված փոխառություններ | - | - |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 89,847 | 208,448 |
| | 89,847 | 208,448 |

## 22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

### 22.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Շուկայական ռիսկ*

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

*բ) Արտարժութային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժութի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է առևտրային դեբիտորական և `կրեդիտորական պարտքերից:

*գ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*դ) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Ընկերությունն ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

| Հոդված<br>2025թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | Ռուբլի |
|---|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 630 | - | 1,941,066 | - |
| Տրամադրված փոխառություն | - | - | | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 225,595 | 24,978 | 3,594,217 | 351,334 |
| | 226,225 | 24,978 | 5,535,283 | 351,334 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | - | - | - |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 16,157 | 519 | 372 | 72,799 |
| | 16,157 | 519 | 372 | 72,799 |
| Զուտ արդյունք | 210,068 | 24,459 | 5,534,911 | 278,535 |

| Հոդված<br>2024թ. | Հայկական դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | Ռուբլի |
|---|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 360 | - | 1,494,837 | - |
| Տրամադրված փոխառություն | - | - | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 795,215 | 30,040 | 2,023,642 | 339,135 |
| | 795,575 | 30,040 | 3,518,479 | 339,135 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | - | - | - |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 85,980 | 540 | 531 | 121,397 |
| | 85,980 | 540 | 531 | 121,397 |
| Զուտ արդյունք | 709,595 | 29,500 | 3,517,948 | 217,738 |

Ընկերությունը ենթարկվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

| Հազար դրամ | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | | Ռուբլու ազդեցություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2025թ. | 2024թ. | 2025թ. | 2024թ. | 2025թ. | 2024թ. |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 2,446 | 2,950 | 553,491 | 351,795 | 27,354 | 21,774 |

## 23 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

## 24 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, պահուստային կապիտալը բացահայտված ծանոթագրություն 11-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընդհանուր սեփական կապիտալ | 11,064,780 | 8,278,599 |
| Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (4,196,124) | (3,188,032) |
| Կապիտալ | 6,868,656 | 5,090,567 |
| Ընդանուր սեփական կապիտալ | 11,064,780 | 8,278,599 |
| Վարկեր և փոխառություններ | - | - |
| Ընդհանուր ֆինանսավորում | 11,064,780 | 8,278,599 |
| Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն | 0.62 | 0.61 |

## 25 Պայմանականություններ

### ա. Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Ընկերության գործունեության վրա ազդող գործարար միջավայրը 2025թ. ընթացքում ձևավորվել է համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական զարգացումների ազդեցությամբ:

Համաշխարհային տնտեսության մեջ պահպանվել են գնաճային ճնշումները, տոկոսադրույքների հարաբերական բարձր մակարդակը և աշխարհաքաղաքական լարվածությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ միջազգային ավիացիոն հոսքերի վրա:

Տարածաշրջանում պահպանվում է աշխարհաքաղաքական լարվածություն, մասնավորապես Մերձավոր Արևելքում տեղի ունեցող զարգացումների ֆոնին, ներառյալ Իրանի և Միացյալ Նահանգների միջև հարաբերությունների հնարավոր սրման ռիսկերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ օդային երթուղիների և տարանցիկ թռիչքների վրա:

Միևնույն ժամանակ, քաղաքացիական ավիացիայի ոլորտում նկատվում է կայունացում և վերականգնում, ինչի արդյունքում ավելացել են տարանցիկ չվերթները տարածաշրջանում:

Հայաստանի Հանրապետության օդային տարածքով իրականացվող թռիչքների ծավալները պահպանվել են կամ աճել են, ինչը դրական ազդեցություն է ունեցել Ընկերության հասույթի ձևավորման վրա:

Ընկերությունը շարունակում է գործել կայուն միջավայրում և, ղեկավարության գնահատմամբ, առկա տնտեսական պայմանները չեն առաջացնում էական անորոշություններ Ընկերության գործունեության շարունակականության տեսանկյունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

### բ Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

### գ Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

### դ Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում

շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

**ե Դատական հայցեր**

Ընկերությունը 01.01.2025- 24.03.2026թթ. ընկած ժամանակահատվածում ներգրավված է եղել դատական գործերում:

| Հայցվոր/Դիմումատու | Պատասխանող /Պարտապան | Հայցի առարկա և վնասի չափը | Կարգավճակը |
|---|---|---|---|
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Էլբրուս Ավիա» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 6,305 ԱՄՆ դոլար | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Բաշկիրյան ավիաուղիներ» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 957.73 Եվրո | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Կուբանի ավիաուղիներ» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 2,412 Եվրո | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Արմավիա Ավիաընկերություն» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 638,689.38 Եվրո | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Աերոսվիտ» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 5,028 Եվրո | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Էյր Արմենիա» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 409,637.7Եվրո | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «ՎԻՄ ԱՎԻԱ» | Նավիգացիոն ծառայությունների դիմաց վճարի պահանջ՝ 28,872Եվրո | Տեղեկություն չկա |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | Արթուր Ստեփանի Գասպարյան | Պահանջ՝ բռնագանձել 2.363.265 ՀՀ դրամ | «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲ ընկերության հայցը բավարարել |
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն | Անվավեր ճանաչել 05.10.2021 թվականի թիվ ԵԴ/22289/02/18 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 08165291 կատարողական վարույթով կայացված 21.08.2021 թվականի «Պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին» թիվ Ո000659-22012/21 որոշումը: | Կասեցվել է |
| Սամվել Բաղդասարյան | «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | Աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքին վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջների մասին հայցադիմում | Հայցը բավարարվել է մասնակի |
| «Ստարկ Գրուպ» ՍՊԸ | «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | Անվավեր ճանաչել «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության կարիքների համար հայտարարված թիվ «ՀԱՆ-ԽԳՀՇՁԲ-02/24»-ի ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «Ծատուրյան Քընսալթինգ» (Արայիկ Ծատուրյան ԱՁ)-ի հայտն բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը | Դատավարության փուլում |

| | | | |
|---|---|---|---|
| Գայանե Սամվելի Մարկոսյան | «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության վարչական և ֆինանսական տնօրեն Գայանե Մարկոսյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու և աշխատանքից ազատելու մասին 31.10.2024 թվականի թիվ 794-Ա հրամանն անվավեր ճանաչելու, Գայանե Սամվելի Մարկոսյանին իր նախկին աշխատանքում վերականգնելու, իսկ վերականգնման անհնարինության դեպքում ոչ պակաս, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցում վճարելուն պարտավորեցնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ բռնագանձելու պահանջների մասին | Դատավարության փուլում (Ստացվել է վերաքննիչ բողոք) |

**զ Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր**

Ընկերությունը չի կնքել այնպիսի պայմանագրեր, որոնք, կախված ապագա որևէ դեպքի/դեպքերի տեղի ունենալուց կամ չունենալուց, ենթադրում են հետագա վճարումներ:

## 26 Գործարքներ կապակցված կողմերի հետ

**Վերահսկողություն**

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (ՀՀ ՏԿԵՆ), որն էլ հանդիսանում է վերջնական վերահսկողը:

Ներկայացվող հաշվետվությունների առումով կապակցված կողմերն են նաև խորհուրդը, տնօրենը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

**1. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

| Հազար դրամ | Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2025թ. | | Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Հայտարարված և վճարված շահաբաժիններ | - | (749,196) | 749,196 | - |

| | Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. | | Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Հայտարարված և վճարված շահաբաժիններ | - | (797,655) | 797,655 | - |

## 2.Գործարքներ ղեկավարության հետ

| Հազար դրամ | 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ | 135,468 | 203,056 |
| | 135,468 | 203,056 |